15. ՄԻՍԱԿ

Կէղնի, չէղնի Միսակ անունով մարդ մը կէղնի։ Հ՝ինք առուտուրով կապրի։ Կէլնի, կէրթա օտար էրկիր աշխատելու։ Քըսան տարի ըդ մեշ կընցնի, կուղա էրթա ուր տուն։

Ուրիշ մարդ մը կէլնի կիգա ըդ մարդու տուն։ Ըդ մարդու կնիկ դինա ուր մարդն ա։ Տարի մը ըդ մեշ կընցընի։ Մարդ կէլնի հ՝ոկըցի կէրթա։

Ժամանակըմ կմնա, կնիկ կպառկի, ուրին կէղնի տղա մը։

Վաճառական կիգա օտարութենեն։ Կիշքա ուրեն էղեր ա իրեք տղա։ Ժամանակ մը ըդ մեշ կընցընի չընցընի, վաճառական կհիվընդնա, կկանչա ուր իրեք տղեն, կբերա, կըսա.—Հանդե ես կմեռնիմ, ի՞նչ դախ օր մեռա, իմ հարստութեն բաժնիք ձեղնե էրկուքի վըրեն, ձեղնե մեկ մահրում կէղնի իմ հարստութենեն։

Վաճառական չասա թե հ՝իրեքեն ո՞ր մեկ մահրում կէղնի։

Վաճառական կմեռնի։ Իրեք ախպեր կկըռվըտին ուրանց պապու մալի վրեն։

Էն կըսա՝ իմն ա, էն կըսա՝ իմն ա։

Պղտիկ ախպեր կըսա.—Էլնինք էրթանք խաղու շարիաթ։

Կէլնին իրեք ախպեր, կընկնին ճամբախ։ Շատ ու քիչ ճամբախ կէրթան։ Մեծ ախպեր կտեսնա կընկա մա օտաց ռեչք։ Մեկել էրկու ախպոր կըսա.—Իգա ռեչք կնկա ռեչք ա։

Միջնեկ ախպեր կըսա.—Ըդ կնիկ էրկու հոգով էղեր ա։

Պղտիկ ախպեր կըսա.—Ըդ կնիկ ըռըկուկ էղեր ա։

Քիչմ՝ ա տեղ կէրթան, կտեսնան մարդմ՝ ա ուրանց հ՝ետևեն

կվաղնի գիկա, կըսե.—Բարի օր ձըզի, ախպըրտա՛նք,—կըսա,—գելօ կնիկմ՝ ա չըք տեսե՞ր ի։

Մեծ ախպեր կըսա.—Վոլա՛, կընկամ՝ ա ռեչք տեսա դիտա։

Միջինիկ ախպեր կըսա.

— Չէղնի՞ քու կնիկ էրկու հոգով էր։

Պղտիկ ախպեր կըսա.—Չէղնի՞ քու կնիկ ըռըկուկ էր։

Մարդ կըսա.—Հա՛, վոլլա՛, իմալ օր կըսեք, էդ հըմալ ա։

— Հիդա դախ յան՝ զիմ կնիկ կիտաք, յան՝ զիրար կսպանինք։ Իմալ օր դուք կըսիք, իմ կնիկ դուք իք սպանի։

Կծեծին զիրար, իրեք ախպեր կզարկին, մարդու գլուխ կկոտրին։

Մարդ կըսա.—Էրթանք խազու մոտ գանգատ։

Կէղնին չորս հոգի, կէրթան։ Շատ ու քիչ տեղ կէրթան։

Պղտիկ ախպեր կըսա.—Իդա ճամփու հետ ռեչք ա գացե, ըդ ռեչք դևի ռեչք ա։

Միջնիկ ախպեր կըսա.—Ըդ դևեն մեկ աչքեն էղե։ Մեծ ախպեր կըսա.—Ըդ դևեն բարձուկ էղեր մեկ դին շաքար, մեկ դին՝ մեղր։

Փչու մա տեղ կէրթան, կտեսնան դևաչին հ՚ընկի ուրանց էտև կիգա, կհասնի իդա չորս մարդու, կհարցու.

— Իմ դևեն կորեր ա, չը՞ք տեսեր ի։

Պզտիկ ախպեր կըսա.—Ես դևի մ՚ա ռեչք տեսա դիտա։

Միջնեկ ախպեր կըսա.—Չէղնի՞ քու դևեն մեկ աչքեն էր։

Մեծ ախպեր կըսա.—Չէղնի՞ քու դևեն մեկ դեն շաքար էր բարձուկ, մեկ դեն լա՝ մեղր։

Դևաչին կըսա.—Հա, իդա դախ, իմ դևեն ձըզմե կուզիմ։

Կկըռվըտին, կզարկին դևաչու գլուխ կկոտրին, դևաչին կեսա.

— Էրթանք խազու մոտ շարիաթ։

Կէղնին հինգ հոգի, կէրթան։

Հ՚իրիկուն կէրթան խազու տուն։ Խազին կհարցու դևաչուց, կըսա.—Դու ի՞նչ ապով էկար։

Դևաչին կըսա.—Իմ դևեն իտա իրեք ախպերն ին պռնած։

Խազին կհարցու պզտիկ ախպորից, կըսա.—Հ՚ո՞ւր ա իդա մարդու դևեն։

Պզտիկ ախպեր կըսա.—Ես խաբար չունիմ, ճամփու հետ իշկեցի, դևի ռեչք տեսա։

Դարձավ միջնեկ ախպոր հարցուց, ըսեց.—Իդա մարդու դևեն· դո՞ւք իք տարի։

Ըսավ.—Մինք չընք տարերի։

Ղադին ըսավ.—Ի՞նչեն գիտեր մեկ աչքեն էր դևեն։

Միջնեկ ախպեր ըսեց.—Ես ընդրոնե գինենք օր դևեն մեկ կըշ-տին էր արծըցեր։

Մեծ ախպորց հարցուց։ Ըսեց.

— Դու ի՞նչեն դիներ դևեն բարձուկ էր մեկ դեն շաքար, մեկ դեն մեղր։

Մեծ ախպեր ըսեց.—Ես ընդրոնե գինենք, ընդոեն օր մեղր էր· բարձուկ, ճանճեր կերած են, թափած ին մեկ դի վրեն։

Խազին կըսա դևբաշուին.—Գնա քու տուն, ըդոնք քու դևի խարար չունին։

Դևաշին կէլնի կիգա ուր տուն։

Խազին կդառնա կընկա մարդու վրրեն կհարցու, կըսա.

— Դու հ՞ո՞րի իս իկե։

Կըսա.—Իմ կնիկ իդա իրեք մարդն ա սպանած։

Կըսա.—Ինչե՞ն դինաս։

Մարդ կըսա.—Ես էկա ճամփախ, իմ կնիկ ըդընցնե հարցըցի, մեծ ախպեր ըսեց՝ ես կընկան օտան ռեչք տեսա։

Վերջապես իրեքն լէ իմալ օր պատմեցին, ըն տեսակն էր։

Խազին հարցուց մեծ ախպոր, ըսեց.—Դու ինչե՞ն գիտցար, ըդ-ռեչք կնկա ռեչք էր։

Ըսեց.—Ուր օտներ օր դրեր էր գետին, ուր օտաց մատներ մոտ չէր իրարու։

Միջնեկ ախպոր հարցուց, ըսեց.—Դու ի՞նչեն գիներ էրկու հոգով էր։

Ըսեց.—Ես ընդրոնե գինենք օր էրկու հոգով էր, օր նստեր էր գետին, դարձեր էր, էլեր, ուր ձեռք դրեր էր գետին՝ էլեր էր։

Պզտիկ ախպոր մոտեն հարցուց։ Պզտիկ ախպեր ըսեց.—Ես ընդրոնե գինենք օր ըռկուկ էր, փշում՝ ա տեղ գացեր էր, ուր հետև դարձեր էր իշկեր էր, ետ հախ, ուր կրրընկներ հ՞ընկեր էր առաջին տեղ, ուր մատներ հ՞ընկեր էր իգին տեղ։

Խազին մարդուն ըսեց.—Գնա քու տուն, ըդ մարդիկ քու կընկաց խարար չունին։

Մարդ էլավ, գնաց ուր տուն։

Մացին իրեք ախպեր հ'ոտի։ Խազին առավ իրեք ախպեր, գը-նաց ուր տուն։ Հացի դախ օր էղավ խազին ճամփցուց զուր մշակ,. ըսեց.

— Գնա, հովվից ուղա օչխար մա, առ արի։

Մշակ առավ էծ մա էկավ։ Խազին էծ մորթեց, կերակուր շի-նեց, ուր մամուն ըսեց՝ հաց էփա։ Հաց էփեցին, առան կերակուր, տարան դրրեցին իրեք ախպոր առջ։

Մեծ ախպեր առավ միս ուր ձեռ, ըսեց.—Իդա միս շան միս է։

Միջնիկ ախպեր հաց վերուց ուր ձեռ, ըսեց.—Իդա հաց ա-ռուն ա։

Պզտիկ ախպեր ըսեց.—Հ'ո՞ւրին չըք ասի, խազին լա փիջ ա։

Հաց չկերան։ Մշակ առավ հաց գնաց տուն։ Խազին էկավ, տեսավ հաց չկերած ա։ Հարցուց մշկուց. ըսեց.—Հ'ո՞ւրին հաց չկե-ռան։

Մշակ ըսեց.—Կուշտ են, չկերան։

Ըսեց.—Ցան դողրին կըսես, յան զքզի կսպանիմ։

Մշակ ըսեց.—Հալ ու քեֆյաթ հրմլա բան մը կա։ Մեծ ախպեր միս առավ ուր ձեռ, ըսեց. «Իդա միս շան միս ա»։ Միջնեկ ախպեր ըսեց. «Իդա հաց արուն ա»։ Պզտիկ ախպեր ըսեց. «Խազին փիջ ա»։

Խազին էլավ գնաց հովվի մոտ։ Հարցուց հովվից.—Ըդ օչխար ի՞նչ օչխար էր ճամփըցիր ընձիկ։

— Ըսեց.—Քու օչխըրներուց էր։

Ըսեց.—Ցան դողրին կըսես, յան զքըզի կսպանիմ։

Ըսեց.—Ըդ էծ էն տարվան ուլն էր օր ուր մամ փիծավ, թո-ղեցիք շան տակ, շան ծիծ կերավ։

Խազին էկավ ֆրռունջու մոտեն հարցուց, ըսեց.—Իդա հաց ի՞նչ հաց էր ընձի ճամփըցիր։ Ցան դողրին կըսես, յան զքըզի կսպանիմ։

Ֆրռունջին ըսեց.—Ըդի ըն տարվան հացն էր օր մըր գեղացիք ուրիշ գեղացիք զարկըցինք զիրար, ձըր արտի մեջ տաս մարդ սպանեցինք, արուն թափավ։ Ըդ հաց ըն արտի հացն ա։

Խազին նիաթ էնեց, գնաց։ Գնաց ուր մամուց հարցուց, ըսեց. —Նանե, ես քու հալալ տղե՞ն իմ։

Մամ ըսեց.—Հա՛, լառ՛, դու իմ հալալ տղեն իս։

Խազին մամուն ըսեց.—Ցան՝ դողրին կըսես, յան՝ զքզի կըս-պանիմ։

Մամ ճարահատ մնալով, տեսավ օր խազին զինք կսպաներ, ըսեց.—Լաո՛, ըն տարին օր թանգութին էր, հաց չկեր, ես գացի ֆըռունջու հետ նստա-կանա, դու ֆըռունջուց իս։

Խազին ուր նիաթ ջատ էնեց։ Ջորս օր մտածեց, չկերցավ տղեկներու հարցում պատմեց։

Խազու աղջիկ հագավ խազու շորեր, գնաց տղեկներու մոտ, ըսեց.—Հ՚ո՞րին եք էկի։

Տղեկներ ըսեցին.—Մըր պապ օր մեռավ, ըսեց. «Իմ հարըստութին էրկու ախպոր պիտի էղնի, ձեր իրեքեն մեկ մահրում պիտի էլնի»։ Մենք չընք դինա ո՞ր մեկն ա։

Աղջիկ ըսեց.—Դուք իրեք լա կէրթաք սարի գլուխ, խորոտիկ աղջիկմ՚ ա ընդհին կիգա, ձեր միտք կփոխիք աղջկա վրեն։ Մեծ ախպեր կըսա. «Քու աստված սիրես ընձի չմոտենաս»։ Կմոտենա՞ս, յան՝ չէ,—Կհարցու խազու աղջիկ։

Տղեն կըսա.—Ըն աղջիկ լուս էղնի չըմ մոտենա ուրին։

Միջնեկ ախպորց կհարցա.—Դու կմոտենա՞ս, յան՝ չէ։

Կըսա.—Իմ քուրն ա, ես չըմ մոտենա ուրին։

Պզտիկ ախպոր մոտեն կհարցու։ Պզտիկ ախպեր կըսա.—Ես թեխսիրութին չըմ էնի։

Խազու աղջիկ կասա.—Էմալ ա, դու փիչ իս։

Պզտիկ ախպեր հարստութենեն կհանին։ Մեկել էրկու ախպեր կէրթան ուրանց պապու մալեր կրաժնին ուրանց վըրեն։